

ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԸՆՏՐՈՂ ՊԱՏԻԱՄԱ-  
ԽՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՅՈՒՅԻՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄՅՈՒՆ

«Արարատ»ի նոյեմբերի համարում տաղով Ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեամ նկ որագիրը, խոստացանք տալ և խորհրդակցական ժողովների նկարագիրը։ Բայց նախքան այդ մասին խօսելը կկամենայինք քիչ հեռուից սկսել, խօսել այն հարցերի մասին, որոնք նիւթ պիտի ծառայէին խորհրդակցական ժողովների համար և թէ մինչև այդ եկեղեցական—ազգային համադրումարը ի՞նչ է արուած եղել մեզանում, ի՞նչ հարցեր հրապարակի վրա են դրուել և ի՞նչ տրամադրութիւն ստեղծել հոգեորականութեան և ժողովրդի մէջ։

Մենք հայերս միշտ առանձին պարձանքով շեշտել ենք, որ հայաստանեայց առաքելական եկեղեցին պահպանել է իր ժողովրդական բնաւորութիւնը, որ եկեղեցի ասելով միշտ հասկացուել է հաւատացեալ ժողովուրդը, որը տէր և տնօրին է եղել իր ազգային—եկեղեցական բոլոր խնդիրներում։

Թէ որ աստիճան իրաւացի է այս տեսակէտը, բաւական է աշքի անցկացնել եկեղեցական կանոնադրքերը և այն որոշումները, որ արել են մեր եկեղեցու համար եկեղեցական—ազգային ժողովները զանազան ժամանակներում։

Եկեղեցական կանոններով հաւատացեալ ժողովուրդը կազմել մի միութիւն, համայնք, որն իր ընտրեալ կարդադրիչների—քորեպիսկոպոսների ձեռքով մատակարարել է այդ համայնքի բոլոր պէտքերը։ Նա ժողովել է եկեղեցու անդամնե ից եկամտի տասանորդը, նա բաժանել է եկեղեցու արդիւնքը հոգեոր սպասաւորնեսի մէջ ըստ սահմանեալ չափու, նա է հոգացել որբերի, այրիների, թշուառների կարիքները, մի խօսքով ստանձնել է եկեղեցու տընտեսական տեսչութիւնը և տնօրինել է ըստ խղճի մտաց, պատասխանատու լինելով հոգեոր բարձրագոյն իշխանութեան և ժողովրդի առաջ։

Ժողովրդի տուրքը մտնելով եկեղեցու գանձարկղը, ծառայել է իր նպատակին. այդ եկամուխց ոչ միայն օգտուել են եկեղեցու սպասաւորները առաջնորդներից պկած մինչև ժամկոչը, այլև ժողովուրդը: Այդ եկամուտներով են պահպանուել այն վանքերը, որոնք ծառայելիս են եղել իրք կրթարաններ, պահպանուել են նոյնպէս այն մենաստանները, որոնք ծառայել են իրք բռնժարաններ, իրք ապաստարաններ ճամբորդների համար, իրք ճրդ նարաններ ապաշխարող մեղսապարտների համար, այդ առւրքերով են պահուել ու խնամուել բորոտներն ու ախտաւորները, անտերունց մեացած որբերն ու այրիները: Եւ ով աւելի ազատ ժամանակ, դիւրութիւն կարող էր ունենալ այս հոգսն իր վրա վերցնելու, եթէ ոչ հէնց եկեղեցու վանքերի սպասաւորները, հոգեորականները. և իրօք եկեղեցական կանոնների մէջ խիստ յաճախ այդ պարտաւորութիւնները պրւում են նրանց վրա:

Եւ մեզ թւում է, թէ այդ հեռաւոր անցեալում ժողովուրդը տասանորդ տալով եկեղեցուն և վանքերին ու այդ եկամուտների տնօրինութիւնը յանձնելով հոգեորականութեան ոչ միայն օաարօտի բան չի կատարել, այլ կահամարել է ամենաարդար միջոցը. վերցրել է իր վրա առօրեայ ընտանեկան ծանր հոգսը, թողնելով հասարակական բնոյթ ունեցող խնդիրների հոգացողութիւնը հոգեորականութեան, որին նա հաւատացել է իր հոգին, իր բարսյական—կրօնական ամենասուրբ և նուիրական զգացմունքները: Ուրեմն տեղի է ունեցել աշխատանքի բաժանումն: Բայց որովհետեւ աշխատանքի համեմատաբար թեթև բաժինն է ընկել հոգեորականութեան, ուստի և ժողովուրդը այդ պատուաւոր և սուրբ կոչման համար էլ միշտ ընտրել է իր միջից ամենաարժանաւորներին:

Մենք պատմութիւնից շատ քիչ բան դիտենք հոգեռորականութեան գործունեութեան մասին առ հասարակի, բայց ոչինչ չփիտենք մանր համայնքների, ծխերի և նրանց հոգեոր վարիչների գործունեութեան մասին. բայց և այնպէս պատմութեան էջերում ցան ու ցրիւ ընկած կցկտուր

տեղեկութիւնները, կանոնագրքերում յիշատակուած սահմանափակումներն ու արդելքները, նզոգքներն ու խրախուսանքները բերում են մեզ այն եզրակացութեան, որ հնումն էլ ամեն ինչ խաղաղ ու անվրդով չին անցկացել որ այն ժամանակներումն էլ եղել են ընչաքաղց հոգեորականներ, որոնք հասարակական եկամուտները փոխանակ նպատակին ծառայեցնելու, իրանց հաճոյից համար են գործադրել, որ ժողովուրդը միշտ հաճոյքով չի բաժանուել իր տասանորդից, նոյն իսկ եղել են գեղքեր, երբ ժողովուրդը յարձակուել է վանքերի վրա կողոպտելու, քանդելու նպատակով: Բայց այս բոլորը յիշատակուում են շատ հազիւ անդամ, մինչդեռ ընդհանուր առմամբ մենք տեսնում ենք երկիւղած վերաբերմունք գեղի կրօնի սպասաւորները և գեղի կրօնական հաստատութիւնները, վանքերն ու եկեղեցիները:

Չուննալով մեր ձեռքին պատմական փաստեր, պիտի ենթադրենք, որ ժամանակի ընթացքում մի կողմից ժողովուրդը իր տասանորդը տալուց յետոյ այլևս չի հետաքրքրուել թէ ինչպէս է գործադրում, միւս կողմից հոգեորականութիւնը ազատ զգալով իր գործունեութեան մէջ, տնօրինել է ամեն բան այնպէս, ինչպէս որ ինքն է կամեցել. մի այլ հանգամանք ևս եկել է նպաստելու այդ դրութեան. այն է, որ ժողովուրդը տգէտ լինելով, իսկ հոգեորականութիւնն համեմատարար աւելի կրթուած, մի կողմից ստեղծուել է կոյր հնազանդութիւն: միւս կողմից անպատասխանատու իշխելու ցանկութիւն:

Բայց պատմական ճշմարտութիւնից չշեղուելու համար պէտք է իսկոյն աւելացնենք, որ ոչ հոգեորականութեան ինքնազլութ իշխելու, կառավարելու տենչը և ոչ ժողովրդի անպայման մեկուսացումն հասարակական գործերից չի հասել այն չափերին, ինչ որ տեսնում ենք կաթոլիկ աշխարհում: թէ մէկ և թէ միւս կողմից տեղի ունենալով զանցառութիւններ, միշտ էլ մնացել են իրեւ զանցառութիւն և ոչ որպէս օրէնք, կարգ: Որ կողմից էլ նայելու լինենք մեր եկեղեցական—աղքային գործերին,

կտեսնենք միշտ հոգեորական և աշխարհական կողք կողքի գործելիս, մէկը միւսին լրացնելիս: Եւ այլ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ մեր եկեղեցու բոլոր սպասաւորները ժամակոչից սկսած մինչև ամենայն հայոց կաթուղիկոսները ընտրուել են ժողովրդից, քանի որ եկեղեցու սպասաւորները գուրս են եկել ժողովրդի միջից, համակռւած են եղել նոյն ձգտումներով ու ցանկութիւններով, ինչ որ ժողովուրդը, նոյն բնածին հակումներով, ինչ որ ունեցել է հայ ժողովուրդը: Մեր պատմութեան իւրաքանչիւր էջը, ամենահին ժամանակիներից սկսած մինչև մեր օրերը, գալիս է հաստատելու մեր ասածը: Դեռ ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակ, քրիստոնէութեան պաշտօնական կրօն զառնալուն Հայաստանում զուգընթաց է զնում լուսաւորութեան գործը բուն ժողովրդի մէջ Լուսաւորչից նշանակուած յատուկ քարոզիչների ու վարդապետների ձեռքով: Իսկ Մեծն Ներսէսի, Սահակ և Մեսրոպի ժամանակ ամբողջ Հայաստանը հեղեղւում է ուսումն կրթութիւն տարածող վանականների խմբերով, որոնք միայն մի նպատակ էին դրել իրանց—լուսաւորել ժողովրդին, գիտակցական քրիստոնեայ և պարտաճանաչ քաղաքացիներ պատրաստել:

Զի պատահել Հայաստանում ոչ մի արհաւիրք, որին ենթակայ եղած չլինի հոգեորականութիւնը իր հօտի հետ միասին. կրինում ենք, այլ կերպ լինել չէր կարող, քանի որ հոգեորականութիւնը առանձին կաստա, առանձին դասակարգ չի կազմել մեր մէջ, չի ունեցել իր յատուկ պահանջները և օտար չի եղել հայ ժողովրդից. այլ նա հայ ժողովրդի զաւակը լինելով, նրա սիրոր միշտ բարախել է այդ ժողովրդի համար, նրա ցաւերին միշտ ցաւակից, տառապանքներին մասնակից է եղել և ինք զինքը նետել է առաջ վտանգի ժամանակ, նահատակուել է ի սէր իւր ժողովրդի, իսկ ժողովուրդն էլ իր հերթին միշտ երախտապարտ է եղել գէպի իր ընտրեալ հոգեորականը, ճանաչել է նրան իրքեւ իւրը և նոցա ապահովութեան համար իր ստացուածքից տաստնորդ է հանել:

Բայց, ինչպէս ասացինք, եղել են շեղումներ երկուս-

տէք, եղել են երբեմն անտարբերութիւն ժողովրդի կողմից՝ իշխելու ցանկութիւն հոգեօրականութեան կողսից։

Եւ այդ բանը աւելի նկատելի է մեր ժամանակներու մ վերջին 19-րդ դարու երկրորդ կիսից յետոյ, երբ քաղաքական պայմանները մեր կեանքում դասաւորւում են ոչ մեր ցանկութեան համեմատ, այլ թելազրում են իրանց պայմանները։

Ըստ պօլօժենիկի հայ ժողովրդի գլուխ և պետութեան առաջ պատասխանատու համարւում է ամենայն հայոց կաթուղիկոսը, իսկ սա իր թեմերը կառավարում է նշանակուած ու պետութիւնից հաստատուած առաջնորդներով ու փոխանորդներով, որով խախտւում է դարաւոր սրբագործուած ընտրական սովորութիւնը իսկ այն խախտումին յաջորդում են այլ սովորութիւնների խախտումներ. այսպէս օրինակ, չնայելով եկեղեցական—ծխական, թեմական դպրոցները պիտի կառավարուէին ժողովրդից ընտրուած հոգարարձական մարմինների ձեռքով, բայց հոգեօր բարձրագոյն իշխանութիւնը մի կողմից ինկատի ունենալով հոգարարձութիւնների անպատրաստականութիւնն ուսումնական խնդրումն միւս կողմից իրբեւ պատասխանատու պետութեան առաջ, կարգադրում է դպրոցների բաղզը, հրահանգներ ու օրէնքներ է մշակում ներքին կառավարչութեան համար և պարտաւորացնում ժողովրդից ընտրուած մարմիններին համակերպել իր կարգադրութիւններին։

Այսպիսի նշանակովի կառավարիչները հոգեօր դպրոցներում և հոգեօր վարչական գործերում վարել են իրանց պաշտօնները ըստ խղճի մտաց, ըստ իրանց հասկացողութեան պատասխանատու լինելով իրանց անմիջական իշխանութեան—բարձրագոյն հոգեօր Պետի առաջ։ Չունենալով գործունեութեան համար որոշ պարզ հրահանգներ ու կանոններ, նորա զեկավարուել են այն սովորութիւններով ու աւանդական կարգերով, ինչ որ ժառանգութիւն է մնացած եղել իրանց նախորդներից, իսկ եթէ եղել են չնորհալի, գործին նուիրուած պաշտօնեաներ, իրանք իրանց համար գործին նուիրուած պաշտօնեաներ, իրանք իրանց հա-

մարդորձաւնէութեան կանոններ են գծել և գրանցով առաջնորդաւել և այս ձեի կառավարչութիւնը նկատելի է եղել մեր հոգեոր կեանքում, եկեղեցական — ազգային բոլոր ասպարէզներում:

Թեմի, փոխանօրդութեան, գործակալական շրջանի հոգեոր հաստատութիւնները, թեմական գպրանօցները, ծխական — եկեղեցական գպրոցներ, եկեղեցիներին կից քահանաների ապահովութեան գանձարկղները, աղքատանոցները և լի մեծ մասամբ կախուած են եղել առաջնորդին փոխանօրդին գործակալին թեմական տեսուչներին թեմական գպրոցների տեսուչների շնորհքից, եթէ ընդունակի ժիր անձնուելու մարդիկ են եղել զործի, պաշտօնի զլուխ կանգնածները, գործը համեմատաբար ծագկեալ վիճակի մէջ է եղել առաջազիմել է, իսկ եթէ թու անզոյն անձնաւորութիւններ են եղել գործն էլ թուլացել նուեմացել է:

Մէկ խօսքով իւրաքանչիւր անձն իր ստանձնած պաշտօնի վրա զրել է իր անհաստական զրօշմը, ներմուծել է իր անձնական հայեացքներն ու ձգտումները և այս իսկ պատճառով հոգեոր վարչական բոլոր խնդիրներում հետզհետէ առաջացել է վարչական խճողումն մինչ այն ստուգանու որ երրեմն կենդրոնն ու դրաի պաշտօնեան իրար չեն կարողացել հասկանալ նոյն իսկ երրեմն խուլ կամ բացարձակ վիճարանութիւններ են տեղի ունեցել բարձր և ստորին պաշտօնեանների մէջ, որոնցից իւրաքանչիւրը ճգնել է ապացուցանել իր արդար լինելը և հակառակորդի սխալը:

Եթէ ընդունենք իրրեկ ճշմարտութիւն այն, որ ընդհանրապէս անհատի աղգեցութիւնը ահազին է իր շրջանի գործերի վրայ նոյն իսկ այն գէպքում, երբ զործունէութեան որոշ շրջանակի որոշ կարգ ու օրէնք կայ, որով իւրաքանչիւրը պիտի անշեղ ընթանայ, ապա մեղ չի զարմացնիլ մեր հոգեոր վարչական գործերում գործի զլուխ կանգնած անձի աղգեցութեան ահազին լինելը, քանի որ մեզանում երրէք չեն եղել մանրամասն որոշ կանոններ իւրաքանչիւր պաշտօնէի համար իսկ Պօլօժենիէն տուել է միայն ընդհանուր սկզբունքներու մանրամասնութիւնները

թողնելով հոգեսոր իշխանութեանը մշտկել ու լրացնել, իսկ սա կամ ոչինչ չի արել կամ արել է զանազան ժամանակներում զանազան իրար հակասող կարգադրութիւններ, ու դորձն աւելի խճճել, խառնել:

Վարչական անօրոշութեան, որոշ կարգ ու օրէնքի բացակայութեան շնորհիւ հոգեսոր հաստատութիւնները տուժել են մեծ չափով՝ դպրոցները կաղ ի կաղ են առաջ զնացել, եկեղեցական, վանական կալուածները մատնուել են անփութութեան և շահատակութեան, Էջմիածնի տուրքերը հետզետէ նուազելով հասել են տնիոսութիւն և այս տեղի է ունեցել ոչ թէ մի երկու տարում, այլ տասնեակ տարիների ընթացքում։

Որքան ցաւալի է այն հանդամանքը, որ եկեղեցական—ազգային գործելը, շնորհիւ անկանոն և քմածին կառավարութեան, որ տասնեակ տարիներ իշխել է մեզանում, ծանր փորձութիւնների են ենթարկուել, նոյնքան ուրախալի է միւս կողմից այն, որ թէ հոգեսորականութեան և թէ ժողովրդեան սրտացաւ ու նախանձախնդիր մասը բողոքներով, գանգատներով խորհուրդներով ձգտել են լուսաբանել իրերի գրութիւնը, ցոյց տալ այդպիսի անսխտեմ կառավարութեան վտանգաւորութիւնը, թէև պիտի և այն խոստովաներ, որ այդպիսի տիրող կարգերի դէմ տրտունջները եղել են լոկ տրտունջներ, պարսաւանք և շատ քիչ մշակուած, կանոնաւորուած վարչական ձև։

Այդպիսի դժգոհութեան արտայայտութեան մէջ էլ հոգեսորականներն ու աշխարհականները չեն բաժանուել իրարից այլ եղած կարգերի պաշտպանների շարքում կանգնած են եղել հոգեսորական և աշխարհական պահպանողական տարրեր, եղած կարգերի դէմ բողոքողների մէջ եղել են և՛ հոգեսորականներ և՛ աշխարհականներ։

Բողոքող հոգեսորականների գրութիւնն աւելի փափուկ է եղել քան աշխարհականներինը՝ միշտ ենթակայ են եղել հալածանքի, դատապարտուել են անգործութեան, զրկուել են պաշտօններից, մինչդեռ աշխարհականները այդ բոլոր անհաճոյութիւններից դերձ են մնացել, չնայելով դրան։

Հոգեորականները առաջին բաղրքներն են եղել և պահանջողները, որ եկեղեցական—ազգային գործերը վարուեն մեր եկեղեցու նախնաւանդ կանոնների և ոգու համաձայն և կառավարչութեան մէջ որոշ կարգ ու օրէնք սահմանուի:

Եթէ հրապարակի վրա չեն երեւում բողոքող հոգեորականները, դրա պատճառը երկուս է. նախ՝ ոչ չի մտել մեր հոգեոր հաստատութիւնների—կանսիստորիանների, առաջնորդների, Ախոզի և կաթողիկոսների արխիւները և այդ ուղղութեամբ ուսումնասիրութիւն կատարել. եթէ մէկը փորձի շատ փաստեր գուրս կրերի ասածներս հաստատող երկրորդ՝ պարբերական մամուլի մէջ բողոքող հոգեորականները մեծ մասամբ դրել են ծածկանուամբ, ուրեմն ընթերցողի համար յօգուածագրի ով լինելը մնացել է անյայտ և կարծուել է զիսաւորապէս աշխարհական քան հոգեորական:

Ամենամեծ բողոքը դէպի Բարձրագոյն հոգեորականութիւնը եղել է այն բանի գէմ: որ հետզհետէ նկատուել է ձգտումն մեկուսացնել ժողովրդին եկեղեցական—ազգային գործերից և ամփոփել հոգեորականութեան ձեռքում բռնոր գործերը կամ կարելի եղածին չափ չեղօքացնել ժողովրդի ներկայացուցիչների իրաւունքներն ու դերը և այդ բանը ամենամեծ չափով զգալի է եղել գպրոցական խնդրում:

Զկամենալով մանրամասնութիւնների մէջ մտնել համառօտակի անցնելով կասենք, որ 1886 թւին, երբ մեր գպրոցները վերաբացուեցին, այն ժամանակուայ, Հոգեոր Բարձրագոյն Իշխանութիւնը յարմարեցնելով մեր գպրոցների վարչական ձեր պետական—եկեղեցական գպրոցնրդի վարչական ձեխն, իրան մեծ իրաւունքներ վերապահեց և եկեղեցական—ծխական գպրոցների ընդհանուր զեկավարութիւնը յանձնեց առաջնորդներին և նշանակուած հոգեորական թեմական տեսուչներին:

Տարիներ շարունակ ժողովրդի զիսակից մասը իրան համարելով իրաւատէր, ձգտում էր իր որոշ դերն ունեալ հասարակական—ազգային խնդիրներում, իսկ Հոգեոր

իշխանութիւնը ձգտում էր իր ձեռքից բաց չթողնել այն արտօնութիւնները, որ պետական օրէնքով իրան էին վեր բապահուած և այս խուլ մրցութիւնը առեց մինչեւ մեր ծխական գոյրոցների երկրորդ փակումը—1896 թւականը:

Համարակական այս ծանր հարուածից յետոյ մի առ ժամանակ հրապարակը գատարկ էր մրցութեան, իրաւանց բանաբարումն առելի չեմ ունենում, ամենքն էլ համակռւած էին ընդհանուր վշտով, սակայն մի քանի տարուց յետոյ 1900 թին նոր խնդիր առաջ եկաւ թեմական դպրանոցների շուրջը: Այս անզամ հոգեոր վերագրյն դեկը գտնըւում էր ամբողջ հայ ազգի բուռն ցանկութեամբ գահ բարձրացած Խրիմեան Խաթուղիկոսի ձեռքին, որն անպայման ճանաշուած է եղել իրրե ժողովրդական իրաւունքների պաշտպան անձն:

Զանց անելով նրա կաթուղիկոսութեան 15 տարուայ գործունէութեան մանրամասնութիւնները և թողնելով առ պագայ պտտմագրի անաշառ քննագատութեան, մենք չենք կարող չարձանագրել այստեղ այն փաստը, որ ժողովրդի իրաւանց պաշտպան կաթուղիկոս Խրիմեանը աշխատեց թեմական դպրոցների աշխարհական կառավարչութեան մէջ փոփօխութիւն մտցնել զօրեղացնելով հոգեորական տարրը: Նա պահանջեց նախ հոգեօրական տեսուչներ ունենալ անպայման, այս բաւական չէ, նա հօգարարձական կազմի մէջ պահանջեց ունենալ անշուշտ երկու հոգեորական հոգաբարձու հոգեօրականներից ընտրուած, որն իր ժամանակին ահազին աղմուկ հանեց, թէև բարերադրաբար շնորհիւ ի Տէր հանգուցեալ կաթուղիկոսի թոյլ բնաւորութեան երկար չտեսեցին այս կարգադրութիւնները և արգէն ժողովրդի ու հոգեօրականութեան մէջ մտած անջրպետը չմեծացաւ ու աղետարեր չեղաւ եկեղերու համար:

Վերջին 15 տարուայ անտակտ և գործունէութեան յեղեղուկ եղանակը կարծես պիտի իսպառ անջատէր ժողովրդին եկեղեցու վարիչներից, եթէ նախ հոգեոր վարիչները շուտով չզգային իրանց սխալը, եկեղեցու ողուն հաշկառակ գործունէութիւնը և յետ չվերցնէին իրանց սխալ

կարգադրութիւները և երկրորդ՝ եթե չգային ընդհանուր աղետները՝ ինչպէս ջաճկահայոց կոտորածը, դպրոցների փակումն, եկեղեցական կալուածների զբաւումն, որոնք կարծես ժամանակին վրա հասան, որպէսզի առ ժամանակ մռացնել տան ներքին պառաքտումն և միացնեն հոգեոր և աշխարհական մարդկանց մի ընդհանուր զաղափարի տակ, եկեղեցու շուրջը, ընդհանուր, միահամուռ գործելու համար ընդդէմ արտաքին հարուածի, որ գալիս էր զիսովին տապալելու դարաւոր և սրբանուէր հաստատութիւնը, հայի միակ յենարան եկեղեցին:

Սակայն այս միահամուռ գործակցութիւնը երկար չը տեսց, եկան 1905 թւի ազատագրական շարժման օրերը հրատարակուեցաւ հոկտեմբերի 17-ի պատմական հրովարտակը, որով խօսքի, զրչի ազատութիւն շնորհուեցաւ հրապատակ ժողովրդին: Այս ազատութիւնը նոր ասպարէղ բացեց հայ զրագէտների ու ճառախօսների համար և որովհետեւ ամենըն էին ուզում ազատամիտ, առաջադէմ, դեմօկրատ երեալ, ուստի խօսում զրում էին հին կարգերի դէմ և որովհետեւ հայոց կեանքում միակ հին և հեղինակաւոր հաստատութիւններով, ուստի ամենքի ոլաքները գէպի այդ դարաւոր հաստատութիւնն ուղղուեցան, ամեն ջանք գործ դրուեցաւ տապալելու, վարկարեկելու նրան և այն, ինչ չէին կարողացել անել արտաքին թշնամիները, փորձեցին անել ներքին բարեկամները: Ի՞նչ մեղագրանք ասեք չթափեցին ս, էջմիածնի գլխին, ի՞նչ բաներում ասէք չմեղագրեցին հոգեոր Յարձրագոյն իշխանութեանը և այն ի՞նչ լեզուով, ի՞նչ գարձուծաներով:

Ամանք խօսքի ազատութիւնը իրանց տեսակ հասկանալով, անդուռն բերանով հոյհոյել սկսան, մռանալով պատշաճաւորութեան սահմանը, ոմանք անտեղեակ ազգային պատմութեան, եկեղեցու ոգուն, նրա անցեալին, մտկերեսյթապէս ծանօթ երոպական ազգերի կրօնական կեանքին, հրապարակ եկան միամիտ ու աղէտ ամրոխին համոզելու, որ էջմիածնը չարիք է, հոգեոր հաստատու-

թիւններն անպէտք, որոնց գէմ սրբադան պատերազմ պէտք է մղել:

Ուռսաստանի ազատագրական շարժումից մենք հայերս ամենից շատ օգտուեցանք — հրապարակի վրա զրինք մեր ներքին ձգտումները, ցանկութիւնները և տենչանքները. բայց մեր կարծիքով, աւելի լաւ կլինէր, եթէ այդ ազատութիւնից չափաւորապէս օգտուեինք և հրապարակի վրա չգնեինք այնպիսի անհեթեթութիւններ, որոնցով լի են 1905 և 1906 թուի սունկի պէս բանող ու շուտ թառամող պարբերական թերթերը:

Միջանկեալ պիտի ասենք, որ մենք երբէք զրկուած չենք եղել մեր եկեղեցին ու եկեղեցականութիւնը քամահարելու իրաւունքից. վաթսունական թուականներից սկսած մինչեւ վերջը մեր բոլոր լրագրերը անարգել քննադատել և հրապարակ են հանել հոգեորականութեան պակասութիւնները, մինչեւ անգամ անհատների կեղաերը չեն քաշուել մերկացնելուց և ցենզուրանու որ իւրաքանչիւր քաղաքացու ու հաստատութեան պատուի նախանձախնդիր էր հանդիսանում: միշտ մտտերի արանքով էր նայում այդ տեսակ հոգեորականութեան գէմ սկսած արշաւանքների վրա:

Մինչև 1905 թուականը և զրանից յետոյ ունեցած ազատութեան տարբերութիւնն այն էր միայն, որ մինչ առաջ չեին ժխտում եկեղեցւ անհրաժեշտութիւնը, մինչ ցանկանում էին բարեկարգուած տեսնել հոգեոր հաստատութիւնները, 1905 թուից յետոյ սկսում է նոր հոսանք տապալելու, քանդելու, չեզօքացնելու այդ հաստատութիւնները:

Բարձրագոյն հոգեոր իշխանութեան գէմ յարձակում գործողներին կարելի է բաժանել երկու բանակի. մի մասը ընդունելով, որ զեռ եկեղեցին, եկեղեցականութիւնն ու հոգեոր իշխանութիւնը դեր ունին կատարելու, ցանկանում էին վերանորոգուած, ժողովրդական լայն մասնակցութեամբ ուժեղացած տեսնել, իսկ միւս մասը տողորուած սօցիալական սկզբունքներով չճանաչելով ոչ եկեղեցի և ոչ աղջ, համամարդկային բարօրութեան ուտօպիական տես-

չանքնելով ոգևորուած կուռում էին եկեղեցու և եկեղեցականութեան գեմ իրրե միտք կաշկանդող, ժողովրդեան ստրկացնող հաստատութիւննրբի գեմ: Վերջիններիս ոկրունքն էր «աշխատաւորական մասսայի» կեանքի բարելաւումն առանց կրօնի և ազգի խորութեան:

Մի կողմ թողնելով վերջին տեսակի մարդկանց և անտես անելով նրանց քարոզած ոկրունքները իրագործելի լինել չլինելու խնդիրը, որովհետեւ մեր նպատակից դուրս է քննադատել որ և է քաղաքական կուսակցութեան դաւանանքն ու գործելակերպը, միայն կանգ կառնենք այն մարդկանց հայեացըների ու պահանջների վրա, որոնք ըստ երեսոյթին սպասելիքներ ունին եկեղեցուց և հոգեոր իշխանութիւնից:

Բայց նախ քան այդ մասին խօսելը, չենք կարող մի քանի խօսք ևս չասել հոգեոր բարձր իշխանութեան բռնած ընթացքի մասին վերջին 15 տարուայ հոգեոր վարչական գործերին, մենք տեսնում ենք տատանուող, անկայուն կառավարութիւն. ոչ մի ժամանակ կողմնակի ազգեցութիւնները այնքան գորեղ չեն եղել որքան վերջին տարիներում և որովհետեւ կողմնակի անձննք նման գաղափարներ ու գործելակերպ չունեին, ուստի և հոգեոր իշխանութեան կարգադրութիւններն էլ լինում էին աարեր, իրար հակասող. գեռ մի կարգադրութիւն չգործադրուած. հրապարակ էր հանւում նոր, առաջնին հակասող կարգադրութիւն. բնականաբար մեծ շփոթ և ընդհանուր տրատունջների դուռն է բանում այս օրինակ վարչական ձեւը, բայց և այնպէս ոչ մի ազգեցութիւն չէր ունենում այն անձի վրա, որ վարչական ղեկավար էր հանդիսանում այն ժամանակ. մենք արգեն թւեցինք մի քանի դեպքեր թէ ինչպէս թեմական դպրոցների շուրջը ստեղծում էր հեղձուցիչ մթնոլորդ. բայց երբ 1905 թւին վերադարձին մեր եկեղեցական կալուածքներն ու դպրոցները, այդ ժամանակից սկսած տեղի ունեցան մի շարք հակասական կարգադրութիւններ նորաբաց դպրոցների վարչական և ծրագրային:

Հետևելով վերջին 15 տարուայ հոգեոր վարչական գործերին, մենք տեսնում ենք տատանուող, անկայուն կառավարութիւն. ոչ մի ժամանակ կողմնակի ազգեցութիւնները այնքան գորեղ չեն եղել որքան վերջին տարիներում և որովհետեւ կողմնակի անձննք նման գաղափարներ ու գործելակերպ չունեին, ուստի և հոգեոր իշխանութեան կարգադրութիւններն էլ լինում էին աարեր, իրար հակասող. գեռ մի կարգադրութիւն չգործադրուած. հրապարակ էր հանւում նոր, առաջնին հակասող կարգադրութիւն. բնականաբար մեծ շփոթ և ընդհանուր տրատունջների դուռն է բանում այս օրինակ վարչական ձեւը, բայց և այնպէս ոչ մի ազգեցութիւն չէր ունենում այն անձի վրա, որ վարչական ղեկավար էր հանդիսանում այն ժամանակ. մենք արգեն թւեցինք մի քանի դեպքեր թէ ինչպէս թեմական դպրոցների շուրջը ստեղծում էր հեղձուցիչ մթնոլորդ. բայց երբ 1905 թւին վերադարձին մեր եկեղեցական կալուածքներն ու դպրոցները, այդ ժամանակից սկսած տեղի ունեցան մի շարք հակասական կարգադրութիւններ նորաբաց դպրոցների վարչական և ծրագրային:

ԽՆԳԻՒՆԵՐԻ շուրջը ովէ մռացել, որ Տփլսիսում ծրագիրը մշտկող յանձնաժողով կազմուած լինելով, ու Էջմիածնում մտածում էին կէս ընտրովի կէս նշանակովի անձերից ժողով գումարել նոյն նպատակի համար, ովէ չի յիշում ծիրական կանոնների հրատարակութիւնն ու յետ վերցնելը, դպրոցներին ծրագիր տալն ու յետ վերցնելը ժողովրդական լայն ընտրական սկզբունք սահմանելն ու շփորձադրելը են. են, և այս մեկը միւսն հակասող շտապի լուրջ չմտածուած կարգագրութիւնները ստուարացնում էին դժգոհների թիւը դէպի Էջմիածին և քանի զնում այնքան բողոքները բարձրաձայն ու ամեն կողմից էին լաւում:

Խսկական աղատութիւն ցանկացողները պահանջում էին որոշ կարգ, որոշ օրենք, լայն ժողովրդական սկզբունքներով, բայց ոչ անիշխանութիւնու որից տուժում էին և դպրոցները, և մնացած հոգեոր հաստատութիւնները:

Վարչական անկայուն և անսկզբունք դորձողութիւնների չնորհիւ ծանրացաւ ու Էջմիածնի տնտեսական զրութիւնը ճեմարանի նիւթականը որ անպայման կապուած էր ու Էջմիածնի տնտեսական զրութեան հետ հետղհետէ նուազեց, բաղդախնդիր մարդիկ օգտուելով ժամանակի խառն զրութիւնից աշխատեցին իւրացնել Էջմիածնապատկան զրամներ, կալուածները, որ առանց այն էլ արդիւնք չէին բերում, միանգամայն դադարեցին արգիւնաբերութիւնից, վիճակները նոյնպէս իրանց տուրքերը չէին տալիս, մի խօսքով բարոյական սնանկութեան հետ զուգընթաց զբամական սնանկութիւնն էր առաջացել:

Զէր կարելի տեսնել այս բոլորը և լուս հանգիստեա լինել և աշա նորա, որոնք ցանկանում էին Էջմիածինն ու նրան ևնթակայ աղգային-եկեղեցական հաստատութիւնները բարեղարդուած և նիւթապէս ապահոված տեսնել, ի որ հայրապետական կոնդակներով, և որ ինքնաբերաբար հաւաքւում ծրագրում խորհում էին բարեկարգել հաստատուն հիմքերի վրա գնել եկեղեցական-աղգային դործերը: Թէ որքան զործ կատարեցին և որքան զործ նպատակայարմար էին, այդ մենք կտեսնենք յիտոյ այժմ մենք

կաշխատենք դասաւորել այն հարցերը, որոնց մասին խորհրդածութիւններ են տեղի ունեցել և շատերն են ժամանակ վատնել:

Ա. Պօլօմէնիէն, որ իր մի շարք յօդուածներով չի համապատասխանում մեր եկեղեցու ոգուն, կամ 1836 թիւն խմբագրած լինելով արդէն հնացել է, բարեփոխել:

Բ. Բոլոր վարչական գործերում գործադրել ընտրական յայն սկզբունքը ուղիղ հաւասար, գաղտնի և ընդհանուր սիստէմով:

Գ. Բոլոր վարչական անձանց պաշտօնի կոչել ժողովրդական ընտրութեամբ:

Դ. Կազմել եկեղեցական-ծխական և թեմական գովրոցների համար կեանքին համապատասխանող ուսման ծրագիր մանկավարժական հիմունքներով:

Ե. Դոգրոցների զեկավարութիւնը հանել հոգեորականութեան ձեռքից և յանձնել ժողովրդին:

Զ. Վանքական և եկեղեցական կալուածների կառավարչութիւնը յանձնել մասնագետների, իսկ վերահսկողութիւնը՝ աշխարհականներից ընտրուած մարմինների:

Է. Ռուսահայոց թեմերը կառավարել ոչ թէ միայն առաջնորդների, փոխանորդների ու գործակալների միջոցով, այլ ընտրել գործակալական, վիճակոյին և թեմական խորհուրդներ:

Ը. Իգական սեռին տալ արականներին հաւասար ձայնի իրաւունք:

Թ. 21 տարին լրացած բոլոր հայ անդամները առանց սահմանափակութիւնների իրաւունք ունենան հասարակական պաշտօններում ընտրել ընտրուելու:

Ժ. Ռւսումը պարտադիր գարձնել և ընդհանուր տաւրքի սիստէմը մացնել:

Բացի այս, երբեմն մամուլի և խօսակցութեան առարկայ եղաւ կուսակիրոն հոգեորականութեան վերացումը և քահանաների կրկնամուսնութեան խնդիրը:

Ահա այն զիսաւոր հարցերը, որոնք ժամանակ առ ժամանակ արձարձւում էին ժողովներում, մամուլի մէջ

կամ մասնակի խմբակցութիւններում և քննուում ու լուսաբանուում էին զանազան տեսակէտներով:

Այս վերոգրեալ հարցերով զբաղուած էին ոչ միայն աշխարհականները, այլ և հոգևորականները, մասնաւանդ Էջմիածնի միաբանները:

Բոլոր հարցերն էլ, ինչպէս տեսանք, կարօտ էին շուտափոյթ որոշման, մասնաւանդ տնտեսական և ուսումնական հարցերը հրամայական այժմէութեան բնոյթ ունէին և յետաձգելը կամ ռւշացնելը կորստաբեր կլինիկ մանուկ սերնդի և. Ա. Էջմիածնի համար:

Այս պատճառով, որպէսզի բոլոր արձարծուող խրնոցըները վերջնականապէս մշակուեն և այդ մշակուած ուրոշումները պարտաւորական զառնան ժողովրդի բոլոր խաւերի համար, 1906 թի օգոստոսին որոշուեցաւ Ա. Էջմիածնում գումարել ռուսահայոց ներկայացուցիչների ժողով, որ կոչուեցաւ Խենդրոսնական ժողով:

Նշանակած ժամանակին ժողովը կայացաւ. և ի Ցէր հանգուցեալ կաթուղիկոսը ժողով, անձամբ բանալով ցանկութիւն յայտնեց բեղմնաւոր աշխատանք ունենալ:

Գուցէ պատմութեան ընթացքում առաջին անգամն էր հայ ժողովրդի մի մեծ հատուած, մօտ  $1\frac{1}{2}$  միլիոն ժողովուրդ ընտրական սկզբունքով ներկայացուցիչ ուղարկում ժողովի, և գուցէ առաջին անգամն էր, որ մի այդպիսի պատկառուելի ժողով ցոյց տուեց հասարակական խնդիրներում միանգամայն թեթևակի վերաբերմունք:

Ունենալով աղքային ժողովների արտաքին բոլոր ձեւերը—պրեզիդիում, քարտուղարներ, չունեցաւ սպասելի ներքին բովանդակութիւնը:

Առաջին իսկ ժողովից նա շեղուելով իր բուն նպաստկից և տարուելով այն ժամանակ գեռ վառ քաղաքական—ազատագրական հովերով, կանգնեց սխալ ուղիի վրա և այդ սխալ ուղղիով սկսեց առաջ զնալ ամեն ինչ քանդելու դիմիվար կանգնեցնելու տեհծով բռնուած, առանց մոտածեւլու, որ այդ ժողովը չի կոչուած ընդհանուր պետական առեղծուածներ լուծելու, այլ խեղճ, իրաւագուրկ հայ ժողո-

վըրդի և նրա թուլացած ու սնանկացած եկեղեցու անհրաժեշտ կարիքների մասին մտածելու, գետ ու դարման պըտութելու:

Նոյն իսկ ընտրեալ ներկայացաւցիչներից ոմանք ժողովի ղեկավարող սկզբունքներից խրտնած հրաժարուեցին ժողովներին յաճախելուց:

Կենդրոնական ժողովը տեսեց ընդամեններիու շաբաթի և բազմաթիւ ու բազմազան ճառեր արտասանելուց յետոյ փակուեց կառավարութեան հրամանով և ազգի ներկայացուցիչները առանց մի դրական գործ կատարելու հեռացան էջմիածնից հարցերը թողնելով առկաիւ խճճուած ու անկարգ:

Ոմանք կարծում են թէ՝ եթէ կենդրոնական ժողովը շարունակուեր կարող կլիներ շատ հրատապ հարցերի լուծումն տար բայց մենք մնացել ենք այն կարծիքինու որ ոչինչ չեր կարող անել, քանի որ նա դրական հոգի վրա չեր կանգնած, այլ օդային ամրոցներ կառուցանելով էր զբաղուած:

1906 թուականը նշանակալից է մեր պատմութեան մեջ նրանով, որ հոգեւորական և աշխատիչական տարրերը այնպէս չեն ընթհարուել իրար երբ և իցէ, ինչպէս այդ թուականում: Ինթերցողները երեկի յիշում են որ կենդրոնական ժողով գումարելու համար հրատարակուած կոնդակից յետոյ հոգեւորականութեան մի մասը ինչ դիրք բռնեց, սոքա դէմ չլինելով կենդրոնական ժողովի գաղափարին, նոյն իսկ անհրաժեշտ համարելով այդ, պահանջում էին, որ հոգեւորականութեան ներկայացուցիչներն էլ մտսնակցեն, ինչպէս նախնի եկեղեցական-ազգային ժողովներ գումարելու ժամանակ էր տեղի ունենում:

Իսկ կենդրոնական ժողովի անաջող վախճանից յետոյ նոյն իսկ փորձեր եղան ու էջմիածնում մի տեսակ խնամակալութիւն հաստատել ամենայն հայոց կաթուղիկոսի վրա և ընդհանուր վարչական խնդիրներում իրանց ընտրեալ ներկայացուցիչների ձեռքով ղեկավար հանդիսանալ, սակայն, այս փորձն էլ անաջող անցաւ շնորհիւ այն հանդամանքի,

որ ոմանք ոչ թէ անկեղծ գործի նույրուած, բնդհանուք շահն ու օգուտն ազբի առաջ ունենալով էին ձգտում այդպիսի խնամակալութեան, այլ անձնական միտումներով։ Մի շարք անաջող ժողովներից յետոյ ո. էջմիածնի միաբանութիւնն էլ դադարեց ժողովներ գումարելուց և ազգա ինեկեղեցական խնդիրները մնացին երեսի վրա, պատահական բողեի տրամադրութեամբ որոշուազ կարութքրութիւնների ենթակայ։

Այսպէս ուրեմն ոչ աշխարհականներից բաղկացած ընտրեալ ներկայացուցիչների ժողովու ոչ ո. էջմիածնի միաբանութիւնից բաղկացած ժողովը չկարողացան արգելու հրապարակի վրա դրուած մի շարք լուրջ խնդիրների յուծումն տալ։ Եւ այնքան էլ հեշտ չէր խնդիր վճռելու երբ մարդիկ ժողովի են նառում, դատում, վիճում մեկնաբանում են այն հարցերը, որոնց մասին միայն լսել են բոյց ոչ մի լուրջ ուսումնասիրութիւն չի կատարուել և եղած տեղեկութիւնները ուշագրութեան չեն արժանացել։

Անշուշտ նոքառ որոնք մտածում էին Լենդբոնական ժողով հրատիրելու պետք է իւրաքանչիւր հրապարակի վրա դրուած հարցերի ուսումնասիրութիւնը կառարած։ զոնէ հում նիւթը բերեին ժողովիս ուր մանրազննին և բազմակողմանի տեղեկութիւններով լրացնեէին։ ապա թէ այդպիսի լուրջ աշխատանքից յետոյ որոշումներ կայացնէին։

Օրինակ, էջմիածնի ամենացաւոտ կողմերից մինն է իւր կալուածների կառավարութիւնը։ Նա զանազան տեղերում ունի մօտ 100 հաղար գեսեատին անուան—Խօթի, Գանձասարի, Տաթեի, Չարեքի, ո. Յակովբայ, Մարցի, Հոտղարծնի, ո. Խոչի—որոնք այնքան եկամուտ չեն բերում, որ կարողանան ընթացիկ ծախքերն ու պետական հարկերը վճարել։

Վանքն ունի հինգ գիւղ—Վաղարշապատ, Մաստարա, Օշական, Եղուարդ, Մողնի, Հաշուելով Մարցայ կալուածում գտնուած գիւղերը, ունի բազմաթիւ այգիներ, տներ, խանութներ, վարելահողեր զանազան տեղերում։ այսքան բազմատեսակ և մեծաքանակ կալուածներ ունե-

նալով հանդերձ, միշտ նիւթական նեղ զրութեան մէջ է և կարօտ նպաստների, օգնութեան իր անհրաժեշտ պետքերը հոգալու համար:

Առաջին անգամից տարօրինակ և օտարօտի է թւում այս հակասութիւնը. մօտ երկու հարիւր հազար զեսեամին անտառ, վարելահող ունենալ, այդի, տուն, խանութ ունենալ և դարձեալ կարօտ մնալ: Բայց այսպէս կարող են մտածել կալուածներին անձանօթ անձինք, իսկ նոքա, որոնք ի մօտոյ ծանօթ են նրանց և հանգամանօրէն զիտեն թէ բանն ինչումն է, ոչ թէ չեն զարմանում; ոչ թէ օտարօտի չի թւում այդ, այլ բնական, թէև ցաւալի:

Խօթայ և Գանձասարի մօտ 40 հազար զեսեատին անտառը ընկած է բոլոր մեծ ճանապարհներից շատ հեռու: Այդ անտառները Եւլախ—Շուշիի խճուղուց հեռու են մօտ 80 վերստ, նոր Բայազէտից՝ մօտ 120 վերստ, իսկ թէ գէպի մէկ և թէ միւս կողմը ոչ մի կանոնաւոր ճանապարհ չկայ, հետեւաբար գերան, տախտակ, ածուխ և գործիքների համար փայտեղէն արտահանելը կապուած է ահազին դժուարութիւնների հետ, ուստի այդ անտառներից մնում են օգտուողներ շրջակայ գիւղացիները, որոնք, ինչպէս յայտնի է, մեծ մասամբ գողանում են քան զընում: Նոյն վիճակի մէջ են նաև Տաթևի ու Չարեքայ անտառները:

Ասում են մեր անտառները հարուստ են պղնձի և այլ հանքերով, բայց արդեօնք մինչև օրս նոքա, որոնք սովոր են դատապարտել Էջմիածնին անտարբերութեան մէջ, կազմել են գիտական արշաւախմբեր, գնացել պտտել են այդ կալուածները, ուսումնասիրել են, մշակել են շահագործութեան ծրագիր, կամ երբ և իցէ մեր միլիօնատերները մտածել են իրանց գրամագլուխը գնել այդ կալուածների վրա, շահագործել յօգուտ իրանց և Էջմիածնի. գոնէ մենք ցայսօր այդպիսի անկեղծ վերաբերմունք, լուրջ աշխատանք չենք տեսել:

Դրա փոխարէն հատորներ կկազմուեն, եթէ ի մի ժողովենք այն յարձակումները, որ պարբերաբար տեղացել

Են էջմիածնի վրա: Ի հարկե հեշտ է քննադատել, քան  
զործ կատարել:

Էջմիածնի գէմ յարձակուղներից որի՞ն չի յայտնի,  
որ էջմիածնը շունի մեծաքանակ զումարներ իր կալուած-  
ների վրա ծախսելու և ոչ էլ միաբանները մասնագետներ  
են վերոյիշեալ աշխատանքները կատարելու: Համար, ուրեմն  
եթէ սրտացաւ են գէպի էջմիածնն ու նրա հաստատու-  
թիւնները, իրանք պիտի հրապարակ գտն և անեն այն  
բոլորը, ինչ ձեռնհաս չէ էջմիածնը կատարելու: և կա-  
րող են ցոյց տալ մի գէպք, երբ կամեցել են օգտակար  
լինել, էջմիածնը ընդ առաջ չի գնացել:

Դոնէ վերջին 10—15 տարում էջմիածնը իր կա-  
լուածները բարեկարգելու համար փորձել է յանձնել մաս-  
նագետների, բայց արդիւնք չի տեսել, իսկ եռապատիկ ու  
քառապատիկ ծախսեր է արել:

Մեր ցանկութիւնն էր ցոյց տալ, որ երբ ժողովում  
են մի խնդրի մասին խօսելու, որոշումներ կատարելու,  
պէտք է այդ խնդրիը բազմակողմանի ուսումնասիրած լի-  
նեն. մինչ դեռ կենդրոնական ժողովին մասնակցող բոլոր  
աշխարհական պատգամաւորները անձանօթ մեր վանքա-  
կան կալուածներին, եկել էին այն բաժանելու հայ և  
թուրք զիւղացիների վրա:

Միակ նիւթը, որի վրա ջանք էր թափուած և մշա-  
կուած էր, դա զպրոցների ծրագիրն էր, որը իր թերու-  
թիւններով հանդերձ կարող էր զպրոցական ասպարիզում  
օգտակար գեր խաղալ, եթէ արտաքին խոչընդուների ըլ-  
հանդիպէր: Իսկ մնացած հարցերից և ոչ մէկը ուսումնա-  
սիրուած չէր ու նրանց մասին ճառողները ոգեւորութեան  
սահմանից գէնը չանցան:

Անցեալ տարի Սինօգի նախաձեռնութեամբ Տվիսիսում  
տեղի ունեցան կալուածները բարեկարգելու մասին խոր-  
հրգակցութիւններ, արձանագրուեցան շատ ցանկութիւններ  
այդ խորհրդակցութիւնների մէջ էլ անպայնման անհրա-  
ժեշտ համարուեց բազմակողմանի ուսումնասիրութեան-  
ենթարկել վանքապատկան կալուածները իրաւաբանական,

կալուածատիրական, արդիւնաբերական տեսակէաներով և և ժողովը իր եղբակացութեան մէջ գուրս բերեց, որ էջմիածինը պէտք է ունենայ իրաւաբաններ, զիւղաանտեսներ, անտառագետներ, հանքաբաններ:

Դեղեցիկ ցանկութիւններ, սակայն յիշեալ ժողովը չի միշտակում թէ այդ պաշտօնեաների համար անհրաժեշտասնեակ հազարները էջմիածինն իր նիւթական տաղնապալից օրերին ո՞ր գումարներից պիտի ծախսէր:

Չնայելով այսպիսի գրութեան, չնայելով, որ աւելի շատ խօսւում ու գրում է տեսականնապէս և համարեադրծնական ոչինչ չի արւում բայց գրուած հարցերը չեն կորցնում իրանց նշանակութիւնը, այլ ընդհակառակը օր աւուր գրանց լուծումն տալը անհրաժեշտ է համարում, այդ պատճառով ամենքն անխտիր, փափակ էին զգում ունենալ եկեղեցական-աղքային ժողով, որն իբրև հեղինակաւոր մարմին կարողանար հետզհետէ քայլայւող հաստատատութիւնները վերականգներ, նիւթական հետզհետէ նուազող աղբիւները փրկել խսպառ ցամաքելուց: Այսպիսի տրամադրութեան ժամանակ վախճանւում է Խրիմեան կաթուղիկոսը: Ինչ ասել կուզի, որ Հայրապետական ընտրութեան ժամանակ գումարուելիք եկեղեցական-աղքային ժողովի վրա էին շատերը գրել իրանց յոյսը, որ պիտի կարողանար մի շարք կնճռոտ հարցեր լուսաբանել և եթէ վախճանական լուծումն էլ չտար, գոնէ որոշ ծրագիր, պարզաբանուած ցանկութիւններ, մշակուած նախադեր դներ տպագայ կաթուղիկոսի առաջ:

Մօտենում են ընտրութեան օրերը. մենք չդիտենք Տաճկահայոց թեմերում աշխարհական պատգամաւորներ ընտրել՝ աղքային ժողովները բացի էջմիջլեան և Դուրեան սբրազաններին ձայն տալու յանձնաբարութիւնը, ուրիշ յանձնաբարութիւններ էլ արել են թէ ոչ, բայց զիտենք, ը Մուսաստանի թեմերում թէ պատիրակների ընտրութեանց ժամանակ, և թէ թեմական պատգամաւորների ընտրութեանց ժամանակ բացի կաթուղիկոսական թեկնածուների մասին խօսելը, արծարծուել են նաև մեր առաջ

բերած խնդիրներից մի քանիսը, և ընտրեալ պատգամաւորների վրա պարտաւորութիւնն են զրել եկեղեցական-ազգային ժողովում սյու հարցերի վրա լուրջ ուշադրութիւն դարձել:

Անհետաքրքիր չի լինիլ կարծում ենք եթէ մէջ բերենք թեմերի պատուիրակային ժողովների որոշումներն:

Եռշում կայացած ժողովում արել են հետեւալ ուրոշումները, որ բառացի մէջ ենք բերում պաշտօնական արձանազրութիւնից:

«.... ժողովը որոշեց իր ընտրելի պատգամաւորի վրա «պարտականութիւն դնել էջմիածնում հոկտեմբերի 30-ին «կայանալի համազգային ժողովում յարուցանել և պաշտապանել հետեւալ խնդիրները»:

«1) Նորընտիր Հայրապետին առաջարկելու Պօլօժեռ «նիայի վերաքննութիւնը և բարեփոխութիւնը համաձայն «հայտատանեայց եկեղեցւոյ ոգոյն և ներկայ ժամանակի «կեանքի պայմաններին, ուր ի միջի այլոց մատնել ընդհաւ «նուր ժողովրդական տուքը յօդուտ պահպանութեան հու «զեռը հատատութիւնների և գպրոցն ըի, վերացնելով «ներկայ կամաւոր բազմատեսակ աննշան զրամական և «նիւթական նուերները, որոնց ժողովումն հանդիպում է «մեծամեծ արդելքների և թիւրիմացութիւնների»:

«2) Որոշել համազգային ժողովում առաջարկելու «Նորընտիր Հայրապետին ընդհանուր եկեղեցական ժողով «հրաւիրելու, որպէս զի այդ ժողովում վերաքննուի մեր «եկեղեցու նախնի կանոնները և բարեփոխութեան են- «թարկուի ամուսնական, ծիսական և այլ կանոնները որոնք «համապատասխան չեն ներկայ կեանքի պայմաններին»:

«3) Որոշել համազգային ժողովում, որ հոգեոր վարչ «չութեանց պաշտօնեաները սինօղից սկսած մինչեւ հոգեոր կառավարութեան անդամները ժողովրդական ընտրու «թեամբ կարգուեն որոշ ժամանակով»:

«4) Որոշել, որ հայոց Հայրապետի մօտ կարգուած «լինի մի ազգընտիր առանձին խորհուրդ հոգեորական և «աշխարհական անձինքներից»:

և «5) Որոշել, որ սինօղի տեսչութեան ներքոյ հաս-

«տատուի մի առանձին վարչութիւն հոգեսր տեսչութեան» «տնտեսական և կալուածական գործերը կառավարելու»:

Միւս թեմերի յանձնարարականները ձեռքի տակ չունենք, որ բառացի մէջ բերենք, սակայն պիտի ասելու ք համարեա նոյն բովանդակութեամբ էին Տփխիսի և Երեանի պատգամաւորների ներկայացրած յանձնարարականները միայն այն տարբերութեամբ, որ մինչդեռ նուշուայ ժողովը իր որոշումներն անում է ընդհանուր բնաւորութեամբ և ոչ ոքի չի մեղադրում որ այդ ցանկութիւնները ցայսօր չեն իրա անացել / սկ Երեանի պատուիրակային ժողովը մի քիչ աւելի մանրամասնութիւններ է մէջ բերում եկեղեցական, կալուածական և գպրոցական խնդիրներում և զտն ւմ է այդ բոլոր չարիքի արմատը նրանում որ աշխարհականներն իրը թէ մասնացութիւն չունեն հոգեոր վարչական գործ բում ուստի աշխարհականների մասնակցութիւնն է պահանջում նորընտիր կաթուղի ոսից:

Հոկտեմբերի 26-ին պատգամաւորների մեծ մասը եկել էին Էջմիածին, իսկ նոյն ամսի 27-ին համարեա բոլորը ներկայ էին, ուստի և որոշուեց խորհրդակցական ժողովներ գումարե «կարեոր» հարց րի մասին խօսելու:

Առաջին ժողովում ուր ներկայ էին մօտ 65 հոգեուրական և աշխարհական պատգամաւորներ, անհրաժեշտ գատուեց զեկավարող վարչութիւն ընտրել, քիչ համարուեց մի նախագահ և մի քարտուղարը, այլ ան բաժեշտ էր ունենալ նախագահական խորհուրդ (պրեզիդիում) իր քարտուղարներով և ընտրեցին երեք նախագահ և եր քարտուղար որովհետեւ ասում էին, շատ լուրջ ու կարեոր խնդիրներ ունին վճռելու:

Երկրորդ ժողովին վեց հոգուց բաղկացած նախագահութունն էլ քիչ համարուեցաւ, որովհետեւ այն կարեւոր խնդիրներն ու առաջարկները որ պիտի անէին պատգամաւորները, պէտք է մշակուէին նախագահական խ րհրդում և որպէս պատրաստի նիւթ առաջարկուէին ընդհանուր խորհրդակցական ժ զովների քննութեան և հաւանութեան: Այս պատճառաբանութեամբ գարձեալ ընտրուեցին 5 հոգի:

ուրեմն 11 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որ պիտի մեզ ժողովականներիս նրկայացնէր կարևոր հրցերի մշակուած ծրագիր:

Տեսնում է ընթիրազգը, թէ /նչ Կարեոր պատրաստութիւններ էր տեսնում խորհրդակցական ժողով և մենք մոքով անցնումէինք դէպի երկու տարի ա աջ գումարուած կենդրոնական ժողովը, յիշում էինք նրա պրեզիդիումը, նրա սեկցիանները, այն մեծ ոգեսորութիւնը, ինչ տիրում էր այդ ժողովների շուրջը, այն հետաքրքրութիւնը, ինչ կար այն ժամանակ ժողովողի մէ:

Յիշում ենք անցեալը և մտածում արդեօք այս իրօք համազգային ժողովը էլ անպատրաստ պիտի լինի ազգի ցաւերը դարմանելու, թէ անցեալ փորձը օր նակ ունենալով պատգամաւորները պատրաստուած եկած կը նին ժողովի:

Դժբաղտաբար, ցաւ ի սիրտ պիտի գտնիք տսելու, որ մեծ տպումբով սկսուած ժողովները սպասիլի արդիւնքը չտուեցին:

Նախ՝ այն հարց ն թէ այս /կեզ ցական ազգային ժողովը համարում է իրան իրաւատէր որոշումներ կայացնելու և նման նախնի եկեղեցական ժողովների որոշումն ըին դրանք պարտաւորական պիտի լինեն ազգի և կաթուզիկոսի համար, պատասխանուեց, որ՝ սա միմիայն խորհրդակցական ժողովներն են եւ սրա որոշումները լոկ ցանկութիւններ պիտի արտայայտեն եւ վճռական նշանակութիւն շունեն:

Երկրորդ՝ ժողովներում արծարծուած խնդիրների շուրջը տեղի ունեցած վիճա անութիւնների ժամանակ երեաց, որ մարդիկ ամենեին պատրաստուած չէին, մանաւանդ տաճկահայ պատգամաւորները, որոնք պէ Զերազի բերանով յայտնեցին թէ իրանք եկած են կաթուղիկոս ընտրելու, բայց եկեղեցու վերանորոգութեան վերաբերեալ խնդիրներում իրանք անձեռնաս են եւն:

Երրորդ՝ ժողովները շնորհիւ ատենապետ պ. Մինաս Զերազի չափագանց մեղմ բնաւորութեան, տաղտկալի էին անցնում. ոչ մի հարց չէր զրւում որոշ, վիճաբանութիւնները չէին լինում զրած խնդրի սահմաններում և չէին հանւում պարզ եզրակացութիւններ:

Զորբորդ՝ 11 հոգուց բաղկացած յանձնաժողովը ամենաեին չզբաղուեց, գոնէ ընդհանուր ժողովներից չերեաց թէ զբաղուել է որևէ հարցի մշակութեամբ:

Հինգերորդ՝ ոչ մի պատգամաւոր ոչ մի հարց չառաջարկեց քննութեան:

Ի վերջոյ՝ ոչ մի պատգամաւոր, մանաւանդ Տաճկաստանից եկածները, չին ցոյց տալիս հետաքրքրութիւն մեր առօրեայ ցաւերի մասին, մինչ զեռ կաթուզիկոսական թեկնածուների շուրջը տեղի ունեցած վիճարանութիւնների ժամանակ գալիս էին ամբողջութեամբ և սուրբ պարտականութիւն էին համարում ելնել երկար ճառերով գրուատել երկրորդ թեկնածուին, իսկ երբ հերթը եկաւ արտաքոյ կաթուզիկոսական խնզրի, ներքին բարեկարգութեանց մասին խօսելու, գահին կիսով չափ զատարկ էր լինում և վիճարանութիւններին մասնակցում էին մի երկուհոգի:

Վերջին ժողովում, նոյեմբերի 1-ի երեկոյեան Պըեղիդիումի ներկայացրած եզրակացութիւնը, որ առաջարկեց շատ քիչ ներկայ եղող պատգամաւորների վճռահատութեան, իր մէջ պարունակում էր այն կէտերը, որոնք առաջ են բերուած նուշուայ պատուիրակային ժողովի որոշումների մէջ, աւելի սեղմ ձեռվ:

Եւ դրանով համազգային ժողովը իր գերը վերջացած համարելով ցրուեց:

Մենք չղիտենք, վեց հոգուց բաղկացած պրեղիդիումը և սրան կից կազմուած հինդ հոգուց բաղկացած յանձնաժողովը և այն պատգամաւորները, որոնք ստորագրեցին այդ եզրակացութեան թղթի տակ, դոչ մնացին իրանց արածից և հաւատո՞մ են թէ գործ են կատարել: Բայց զիտենք, որ այդպիսի որոշումները, ընդհանուր գծերով արտայայտուած ցանկութիւնները ոչ մի գործնական արժէք ունենալ չեն կարող, քանի որ այդ խնդիրներից իւրաքանչիւրը լուրջ ուսումնասիրութեան կարօտ է, որ տեղի չունեցաւ:

Օրինակ վերցնենք այս որոշումը. «Նորընտիր Հայրապետին առաջարկել պօլօժենիայի վերաքննութիւնը և բա-

րեփոխութիւնը համաձայն Հայաստանեաց եկեղեցւոյ ոգոյն և ներկայ ժամանակի կեանքի պայմաններին . . .»

Որո՞նք ենք պօլօժենիայի անհամապատասխան կէտերը, որո՞նք են հակառամ մեր եկեղեցու ոգոյն, ի՞նչ պիտի հասկանալ ժամանակի կեանքի պահանջ ասելով, միթէ այդպիսի բնդհանուր բանաձեռ պատճառարանուած չպիտի լինէր, միթէ նորընտիր Կաթուղիկոսին չպիտի տրուեր փոխանակ լոկ գեղեցիկ ցանկութիւններ, պատրաստի բարեփոխուած պօլօժենիէ, բազմակողմանի ուսումնամիրուած թէ ըստ եկեղեցու ոգու և ըստ ժամանակի պահանջների, այլ խօսքով, փոխանակ նոր զահ բարձրացող Հայրապետին լոկ խօսքեր հրամցնելու, աւելի լաւ և գործնական չ'ը լինիլ պատրաստի նիւթ տրուեր:


Կարող են մեզ առարկել, որ այդ ցանկութիւնների մէջ շեշտուած կէտերը երկար ժամանակուայ ուսումնասիրութեան կարօտ են, 5—6 օրում անկաերլի էր այդպիսի խնդիրներ մշակել, այս, բայց չպիտի մոռանանք, որ այդ խնդիրները երեկ չեն ծնունդ առել, այլ տարիներ շարունակ այդ հարցերի մասին խօսւում և առաջնորդողներ են գրւում թերթերում, բայց մինչև օրս չը տեսանք խօսքից գործին անցնելու սրտացաւութիւն. ամենքն են խրատներ կարդում, բայց ոչ ոք չի կամենում տեսական ծանր աշխատանքի ձեռնարկել: Ճիշտ նոյնպիսի վերաբերմունք մ նք տեսանք համազգային խորհրդակցական ժողովի կողմից, նա արեց ամենազիւրինը, թերթի կէս երեսի վրա զրօշմեց իր ցանկութիւնները ու գնաց. իսկ նորընտիր Կաթուղիկոսը պիտի հայրապետական կեանքի կիսից աւելին գործ զնի իւրաքանչիւր կէտը յատուկ մասնախմբերի ձեռքով ուսումնասիրել տալու վրայ, ապա թէ կեանքի մէջ գործադրել:

Թէև հիասթավուած ենք պատգամաւորական ժողով՝ գործունէութիւնից, թէև մինչև օրս մեր եկեղեցու և նրա հովանու տակ գտնուած հաստատութիւնների բարեփոխութեան մշակուած ծրագիր չունենք, սակայն չենք յուսաւ հատւում. զեռ ժամանակ և այ գոնէ աշխատանքի մի մասն անելու, թող իւրաքանչիւր սրտացաւ և կարող անձն կամ

խմբեր ուսումնասիրեն, կազմեն, մշտկեն և ծրագրեն այն բոլոր հարց' րը, որոնք այժմէութիւն ունեն մեր հոգեորդարչական կեանքում։ Խորաքանչիւր այսպիսի մի աշխատութիւն նորընտիր կաթուղիկոսի համար կլինի ամենաթանկագին ընծան։

«Արարատի» յաջորդ համարներում առաջ կրերենք մեր գիտողութնւններն ու ծրագիրը գրուած հարցերի նկատմամբ։ Նոյնպիսի աշխատութիւններ սիրով կհիւրընկալուեն «Արարատի» մէջ և թէ ցանկանան աշխատել։

Մատր. Փարզ.



### Մ Ա Յ Ո Ա Թ Ո Ւ

— Ամենապատիւ Տ. Տեղակալի հրամանով Սինօդի անգամ Բարձրապատիւ Մատթէոս վարդապետը ամսոյս 2-ին մեկնեց Երևան թեմական գպրանոցի աշակերտական յուղումները Տեսուչ Տ. Աղամալեանի դէմ խողազացնելու և դասերը վերսկսելու։ Ամսոյս 17-ին իր վրա գրած պարտաւորութիւնը կատարելով վերադառնու Մայր Աթոռաւ

— Թեմական քննիչ Բարձր. Բենիկ վարդապետը Երևանի Կոնսիստորիայում մի քանի զննութիւն անելուց յետոյ մեկնեց Տփխիս, այնտեղ կատարելու վերաքննութիւն։

— Առապատականի նոխավկայի վանքի շուրջ գըտնուող հայերը պարուկական անիշխանական գրութիւնից սարսափած դիմել էին Ամենապատիւ Տ. Տեղակալին, որպէսզի թոյլ տայ վանքի սրբութիւններն ու անօթները փոխադրել Ռուսաստան, որ չենթարկուեն աւարառութեան։ Տէր Տեղակալը Սինօդի միջոցաւ պատուիրեց յիշեալ վանքի թանկագին իրերն ու մասունքները փոխադրել ժամանակառապէս Մայր Աթոռ, մինչև խողազութիւնը կվերականգնի Պարսկաստանում,